ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«Բ Ա Ր Ե Կ Ա Ր Գ Ո Ւ Մ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ»

ՀՀ, 1101, ք.Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոցի 0
Հեռ. +374 (231) 53663 - 112

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
" ДИРЕКЦИЯ
Б А Р Е К А Р Г У М"
МЭРИИ ГОРОДА
ВАГАРШАПАТ

РА, 1101, г. Эчмиадзин, ул. Св. М. Маштоца 0
Тел.: +374 (231) 53663 - 112

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, "BAREKARGUM DIRECTORATE" OF THE MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
0 St. M. Mashtots Str., 1101, Ejmiatsin, RA, Tel. +374 (231) 53663 - 112

№ 120 «01» 10 2024 թ.

«ՆԱԻՐԻ ԹՈՐՈՍՅԱՆ» ԱՁ-ԻՆ

Հարգելի՛ պարոն Թորոսյան,

Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» ԲՀ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Նաիրի Թորոսյան» ԱՁ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2024 թվականի սեպտեմբերի 9-ին կնքված N «ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 24/7» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Ձեր ընկերությունը պարտավորվել է սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Էջմիածին քաղաքի փողոցների գծանշման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք)՝ Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 և N 1.1 հավելվածներով ներկայացված գնման ժամանակացույց – տեխնիկական բնութագրին համապատասխան:

Համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույց – տեխնիկական բնութագրի՝ մինչև 2024 թվականի սեպտեմբերի 29-ը ներառյալ Կատարողի կողմից պետք է ավարտվեին և հանձնվեին վերոնշյալ պայմանագրի արդյունքները, սակայն աշխատանքները սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում չեն կատարվել, ինչպես նաև չի պահպանվել Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1.1 հավելվածով ներկայացված պահանջը /աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ներկերն ի պահ են տրվելու պատվիրատուին, իսկ աշխատանքների կատարման ընթացքում դրանց բացթողումն իրականացվելու է Պատվիրատուի կողմից՝ վերահսկողությամբ/:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Պայմանագրի 5.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» ԲՀ-ն, հիմք ընդունելով 2024 թվականի սեպտեմբերի 9-ին կնքված N «ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 24/7» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը, 2024 թվականի հոկտեմբերի 1-ից մասնակի միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Նաիրի Թորոսյան» ԱՁ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 10 /տասը/ բանկային օրվա ընթացքում Վաղարշապատի համայնքապետարանի գանձապետական «900325151109» հաշվեհամարին վճարել N «ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 24/7» ծածկագրով գնման պայմանագրի որակավորման ապահովումը՝ 1276200 /մեկ միլիոն երկու հարյուր յոթանասունվեց հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ գումարի չափով, պայմանագրի ապահովումը՝ 850800 /ութ հարյուր հիսուն հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված տույժերը, որ կազմել է 3144 /երեք հազար մեկ հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ /(6540000 – 228 * 1108.474) * 0,05% * 1 աշխատանքային օր/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում:

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Կատ.՝ ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 24/7 ծածկագրով
գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի
քարտուղար Խ. Հազյան
Հեռ.՝ +374 94 27 07 00, +374 231 5 36 63 /520/